ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք. Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ-3-Ե- Հ-8910
«25» հոկտեմբերի 2021թ.

«ՖՈՐՏՈՒՆԱ ՍԻԹԻ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/27» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

-իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.2) (այսուհետ՝ հայտարարագիր) մասնակցի կողմից հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև հայտարարագրում

- «1.1.4. Գրանցման օրը, ամիսը, տարին» ենթաբաժնում՝ լրացված տեղեկատվությունը հստակեցման կարիք ունի.
- «2.7. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժնի «2.7.1. Մասնակցության չափը (%)» դաշտում նշված է կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, սակայն «ա» կետում, ինչպես նաև «2.7.2. Մասնակցության տեսակը» դաշտում որևէ նշում կատարված չէ.
- «2.9. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնի «2.9.2. Կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացումը» դաշտում կատարված չէ նշում իրական շահառուի կողմից կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացման ձևի վերաբերյալ.

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/27» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **հոկտեմբերի 26-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/27» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան
Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788